ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/04

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/248-18 գրությամբ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 29.12.2017թ. թիվ 01/61-29277 գրության հիման վրա, 11.01.2018թ. թիվ 03/26-3/248-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 17.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/574-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 16.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով բաց մրցույթ:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն մասնակցել է Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված վերոհիշյալ մրցույթին և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

«ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 28.12.2017թ. ժամը 15:00 նիստի թիվ 3 արձանագրության թիվ 1 կետի համաձայն՝ առաջնորդվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերի ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «Ձևավորում» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտարարությունը համարվել է իրականությանը համապատասխանող, իսկ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 321594 /երեք հարյուր քսանմեկ հազար հինգ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամի չափով:

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 44-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է մերժել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը և 2-րդ, 9-րդ չափաբաժինները հայտարարել է չկայացած:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտնել և հավաստել է, որ Ընկերությունը բավարարում է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 321,594 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն»:

Ընկերությունը հայտնել է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, որը փաստվում է նաև՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 12.03.2018թ.-ին տրված թիվ 959 տեղեկանքով, համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ.-ի դրությամբ չունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ընկերությունը նշել է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտնելով և հավաստելով, որ բավարարում է մրցույթի հրավերով սահմանված մասնակցության

իրավունքի պահանջներին, գործել է իրավաչափ և չի խախտել գնման գործընթացի շրջանակում որևէ պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը հայտնել է, որ 13.03.2018թ.-ին «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի լիազորված փաստաբանի կողմից համապատասխան փաստաբանական հարցում է կատարվել ՀՀ ԿԱ ՊԵԿ, որով Ընկերությունը խնդրել է տրամադրել տեղեկատվություն, արդյոք «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. /հայտ ներկայացնելու օր/ դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե՝ ոչ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը գտնում է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և խնդրել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

Երևանի քաղաքապետարանը 29.12.2017թ. թիվ 01/61-29277 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով կազմակերպված բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. որոշմամբ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով, հարցում էր ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած

մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, որին ի պատասխան՝ ստացվել է եզրակացություն համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց պարտավորություններ 321594 ՀՀ դրամի չափով, որի հիման վրա վերջինիս հայտը մերժվել է:

Ամփոփելով վերը նշվածը, Պատվիրատուն խնդրել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 19.01.2018թ. ժամը 11:50-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է Խորհրդին վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/04 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/04 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որին մասնակցելու նպատակով «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն բավարարում է Մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

4. Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 22.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

5. ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 26.12.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝321 594 ՀՀ դրամի չափով:

6. Մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 28.12.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով Մրցույթի 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը և նշված չափաբաժինները հայտարարել է չկայացած:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/248-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 29.12.2017թ. թիվ 01/61-29277 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի 16.03.2018թ. գրությունը՝ կից նյութերով, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 03.04.2018թ. թիվ 1/6-1/16189-18 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց

ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ:- Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի

միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5

աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Այսպիսով, Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԲՄԾՁԲ-18/10» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. հայտ է ներկայացրել:

«Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն բավարարում է Մրցույթի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.12.2017թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով 22.12.2017թ. հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պատական եկամուտների կոմիտեի կողմից 26.12.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 321 594 ՀՀ դրամի չափով:

Մրցույթի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացությունը, 28.12.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումով Մրցույթի 2-րդ և 9-րդ չափաբաժինների մասով մերժել է «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի հայտը և նշված չափաբաժինները հայտարարել է չկայացած:

Խորհուրդն արձանագրում է, որ Ընկերությունը 16.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությանը կից ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 1 բաժնի կողմից 12.03.2018թ.-ին տրված թիվ 959 տեղեկանքը, համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի:

Միաժամանակ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն Խորհրդին է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 16.03.2018թ. թիվ 70-1/12963-18 գրությունը՝ համաձայն որի «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով ժամկետանց պարտավորություններ չունի:

Խորհուրդը 16.03.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/4770-18 գրությամբ հարցում է ներկայացրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ կից ներկայացնելով Ընկերության կողմից Խորհրդին տրամադրված վերը նշված տեղեկանքը, և խնդրել է հայտնել արդյոք «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն 20.12.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, թե՝ ոչ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 03.04.2018թ. թիվ 1/6-1/16189-18 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուին տրվել է տեղեկանք համաձայն որի 22.12.2017թ. դրությամբ Ընկերության հարկային պարտավորությունները կազմել են 321 594 ՀՀ դրամ, սակայն «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի կողմից 05.03.2018թ. ներկայացվել է 2017թ. շրջանառության հարկի 2-րդ եռամսյակի ճշգրտված հաշվարկ՝ հարկը նվազեցնելով 395 200 դրամով, որի արդյունքում կատարվել է հարկ վճարողի պարտավորությունների վերահաշվարկ և 20.12.2017թ. դրությամբ հարկ վճարողի մոտ առկա պարտավորությունները զրոյացվել են:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու***

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է*** պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Վերոգրյալով պայմանավորված, Խորհուրդը գտնում է, որ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ ըստ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Խորհրդին տրամադրված գրության համաձայն՝ 20.12.2017թ. դրությամբ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի մոտ առկա պարտավորությունները զրոյացված են եղել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2018թ. թիվ 03/26-3/248-18 գրությամբ «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 04419293) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ